## ԳԼՈՒԽ ԽԸ
### *ԵՐԿՈՒ ԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

Ռոստոմ խանը, որի մասին գրեցինք, Բագրատունիների տոհմից է: Նրանց թագավորության անկումից և Անիի ավերումից հետո Բագրատունիների տոհմի մնացորդները գնացին Վրաստան, հարեցին նրանց թագավորներին և դարձան վրաց բոլոր գործերի ղեկավարները: Երբ վրաց թագավորությունը վերացավ, երկիրը ընկավ պարսիկների ձեռքը, սրանք Բագրատունիների տոհմին իշխանություն տվին տիրելու վրաց բոլոր սահմանները: Եվ Բագրատունիները աճեցին որդուց որդի մինչ այս Ռոստոմը, որ Լավարսափ անունով մի որդի սերեց իր կին Մարիամից: Ռոստոմը նրան պահպանում էր, որ իր փոխարեն դառնա վրացիների վրա իշխող:

Մի օր առնելով իր որդուն՝ բազմաթիվ զորքերով գնաց երեների որսի այն տեղը, որ կոչվում է Ղարայազ, որ նշանակում է սև գարուն: Այնպես եղավ, որ հետապնդեցին որսերին և ամենքը շտապում էին սպանել որսը: Եվ հրացանների խառնիխուռն կրակոցներով զարկին թագավորի որդի Լավարսափին և սպանին: Ռոստոմը վախեցավ իրենից, փախավ գնաց Թիֆլիս քաղաքը: Նա հետամտեց իր որդուն սպանողներին գտնել, բայց չկարողացան իմանալ: Ապա երկու մարդու դատապարտեցին՝ մեկի անունը Բայանդուր էր՝ հայ Մամիկոնյան տոհմից, որին կոչում էին Թումանեցի: Իսկ մյուսի անունն էր Շիշուշ՝ վրացի, տոհմով Բարաթեցի: Սրանց դատապարտեցին՝ ասելով, թե դուք էիք նրան մոտիկ, երբ նրան սպանեցին կամ դուք գիտեք նրա սպանողին և կամ դուք եք սպանել:

Ապա խոսակցություն բացվեց, հայերը ասում էին՝ վրացին է սպանել, վրացիքն ասում էին՝ հայն է սպանել: Ապա որոշեցին սամարթելի անել՝ այսինքն դատավճռով մենամարտել, ով հաղթվի, նա է սպանել թագավորորդուն: Այս վճիռը հաստատվեց նրանց միջև, որ երկուսով միայն դուրս գան: Պատրաստվեցին, հագան ռազմի հագուստ և զինվեցին զենքերով, համբուրեցին թագավորի ծունկը, անցան Կուր գետի այն կողմը՝ քաղաքի արևելյան կողմը:

Իսկ վրաց նենգավոր ազգը հրապարակավ խրատ տվեց երկուսին էլ, երբ կմտնեք ասպարեզ, նախապես մի կռվեք, այլ քշեցեք





ձիերը այստեղ-այնտեղ, թերևս խղճա թագավորը և չթողնի կռվել: Այս խրատը ճիշտ ընդունեց Բայանդուրը (հայը): Իսկ կայենանման վրաց ազգը գաղտնի խրատ տվեց Շիշուշին (վրացուն), թե դու փոքրահասակ ես և թույլ, իսկ Բայանդուրը հաղթամարմին է ու զորեղ, դու չես կարող կռվել նրա դեմ: Ուստի երբ նա ձիով խաղս անի, դու ջանա նիզակով հարվածել նրան, թերևս կարողանաս նրան գետնին գցել:

Բայանդուրը Շիշուշին առաջեց, իսկ սա նրա հետևից մտավ թամբի մեջ և նիզակը ուղղեց Բայանդուրին ու գեղարդը մտցրեց Բայանդուրի փորը, պորտի տակից թափանցեց մյուս կողմը, մսի և մորթու մեջ անցավ գեղարդը: Իսկ Բայանդուրը մտրակեց երիվարը, շեշտակի հասավ նրան և լախտով հարվածեց նրա պարանոցին, և նա ձիուց կախվեց: Կամենում էր նորից հարվածել, բայց քանի որ լախտի բռնակը արյամբ շաղախված էր, պոկվեց նրա ձեռքից: Հանեց թուրը, որ հարվածի նրան, բայց Շիշուշը խելագարված էր, ընկավ գետնին, իսկ Բայանդուրը թուրը վրա բերեց ու խփեց ձիու պոչը արմատից կտրեց: Մահմեդականները ընկան Շիշուշի վրա և չթողին, որ նրան սպանի: Ապա հայերն ու մահմեդականները խառնիխուռն ելան գնացին հիացած բարձրացրին Բայանդուրին և բերին իշխանի մոտ: Իշխանը պատվիրեց բժիշկներին բուժել նրան:

(Իշխանը) անչափ սիրեց նրան: Հրամայեց, որ հետևյալ օրը Շիշուշին հանեն և հոդ առ հոդ մանրեն ու գցեն շներին: Նա Քրիստափոր անունով մի աբեղա եղբայր ուներ, որ թագուհու խոստովանահայրն էր: Սա գնաց աղաչեց նրան (թագուհուն) իր եղբոր փրկության համար: Իսկ նա (թագուհին) աղաչեց իր ամուսնուն, ուստի չսպանին նրան: Սակայն ինչ որ Շիշուշն ուներ՝ ծառա, աղախին, գյուղ, այգի, անասուն և այլ ամենը, ինչ որ նա ուներ, հրամայեց ամբողջը գրով հանձնել Բայանդուրին: Արին ըստ նրա հրամանի: Այստեղ վրացիները մի փոքր կոտրվեցին իրենց գոռոզությունից:

Հայերը նախատինքի երգեր հորինեցին նրանց լեզվով ամեն տան (երգի) ավարտին ասում էին՝ Շիշուշ, ծաղի, Բայանդուր մսուդա, այսինքն՝ Շիշուշ, փախիր, Բայանդուրն է գալիս: Երբ հայ մանուկները այս երգում էին, վրացիները ամոթահարվում էին: Սանի